ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱԿՈԲՅԱՆ



# ՍԻՍԻԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ՖԻԴԱՅԻՆԵՐԸ

9(47.925)
Հ-17

ՎԼԱԴԻՄԻՐ ԶԱՎԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՍԻՍԻԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ՖԻԴԱՅԻՆԵՐԸ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ–2012

Վլադիմիր Հակոբյանը «xx դարի հայ շրջիկ լարախաղացների», «Արթնացում», «Քնած մանուշակ» գրքույկների, ինչպես նաև Սիսիանի «Կամավոր ֆիդայիներ» գրքի հեղինակն է:

Գիրքը տպագրվում է հեղինակի միջոցներով:

## ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Սիսիանի կամավոր ինքնապաշտպանների՝ հրապարակախոս, զինագործ, բժիշկ, օդաչու, ճակատում կռվող ազատամարտիկների գործունեությունը:

Լրացնում ենք «Սիսականի արծիվներ» գրքույկում բաց թողնված կենդանի ազատամարտիկների անունները, որոնք կոչվում են հիմք կերտող կամավորականներ: Գրքում տրվում են մոռացված, նախաձեռնող հրամանատարների և ազատամարտիկների մասին տվյալներ, ինչպես նաև նրանց տարբեր պահերի լուսանկարներ:

Դիմել եմ բոլորին. ովքեր ցանկացել են, ներկայացվել են, ովքեր հնարավորություն չեն ունեցել, նկարել ենք ինքներս: Գրքի նպատակն է գալիք սերնդին ճշգրիտ տեղեկություններ ներկայացնելը:

Պատերազմի ժամանակաշրջանում ազնիվ, նվիրված, հայրենասեր մարդիկ թե՛ քաղաքական, թե՛ ռազմական պահերին միշտ չեն գնահատվել՝ իրենց տեղը զիջելով նյութապաշտ, թալանչի մարդկանց: Գրքում ներկայացվում են 1918–1920 թթ. պայքարող մեծն Գարեգին Տեր–Հարությունյանի (Նժդեհ), սիսիանցիներ Զաքար Տեր–Ղազարյանի, Ռուբեն Հովհաննեսի Վարդանյանի, բռնակոթցի Եղո Ամիրջանի Ղազարյանի գործունեության մասին:

Եկավ նոր սերունդ, որն իրականացրեց մեր պապերի դարավոր երազանքը, և Արցախը միավորվեց իր մայր հայրենիքին, Հայաստանը դարձավ ազատ, անկախ ինքնուրույն հանրապետություն:

Վաղատնի գյուղի ծնունդ եմ: Սիսիան քաղաքի ազգային–ազատագրական շարժման կազմակերպիչ եմ եղել, քաղաքական–ինքնապաշտպանական մարտիկ, արցախյան կոմիտեի Երևանի մասնաճյուղի համակիր, Սիսիանի մասնաճյուղի ԱԻՄ կազմակերպության հիմնադիր, առաջին եռագույն դրոշի բարձրացնողը:

1988 թ. կինո «Որոտանի» դիմաց իմ ուժերով տեղադրել եմ Գարեգին Տեր–Հարությունյանի (Նժդեհ) կիսանդրին:

Ես, համարվելով կրկեսային ժանրի հեղինակ, ազգային արվեստի կատարող, վաստակավոր արտիստ, անտարբեր չեմ եղել, կազմակերպել եմ համերգներ թե՛ զորամասերում, թե՛ թիկունքում և՛ հասույթը փոխանցել եմ ազատամարտիկների ընտանիքներին: Տարիներ հետո իմ

հայրենի գյուղում տեղադրել եմ Սողոմոն Թեհլերյանի հուշաքար–աղբյուրը՝ կենդանի ազատամարտիկների հիշատակին:

Արցախյան ազգային–ազատագրական պայքարի ժամանակ թե՛ ճակատում, թե՛ թիկունքում պայքարի մեջ են եղել շատ ու շատ հայրենասեր մարդիկ, որոնք իրենց նկարներով հիշատակվում են գրքում՝ անմահ մնալով մեր գալիք սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

Գրքում ներկայացվում են կամավոր հերոս ֆիդայիների նկարները:



Գրիգոր պապս (կենտրոնում) եղբայրների հետ
(դաշնակցականներ)
1. ԶԱԽԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԿՈԲԻ
2. ԶԱԽԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲԻ
3. ԶԱԽԱՐՅԱՆ ԽԱՉՈ ՀԱԿՈԲԻ







Հեղինակը մի խումբ մտավորականների հետ



1988 թ.: Ցեղինակն իր ուժերով միանձնյա տեղադրեց Սիսիանում Գարեգին Տեր–Յարությունյանի (Նժդեհ) կիսանդրին:

*Էլ ի՞նչ հայ մարդ ժամանակի,*
*Որ չրեսնեմ ու չգրեմ, չկերպեմ,*
*Ժամանակի կյանքով չապրեմ,*
*Չխենթանամ անենքի հետ:*
*Ինչ լույս է հարկավոր, անկախություն,*
*Մի կտոր հաց, ապահով երկինք:*
*Անապառ մի գրիչ հավերժ իմ ձեռքին,*
*Ձայն ազատության, ազնիվ մտքերի,*
*Միրտ փաղաքշանք սիրտ ձեռքերով:*

Ցեղինակ







## ՆԺԴԵՅ

Գարեգին Տեր–Յարությունյանը ծնվել է Նախիջևանի Կզնուտ գյուղում 1888 թ.:

Նախնական կրթությունը ստացել է Նախիջևանում, ապա Թիֆլիսի միջնակարգ դպրոցում: Այստեղ էլ ընդունվել է ՅՅ դաշնակցության շարքերը:

1902 թ. մեկնել է Պետերբուրգ և ընդունվել տեղի համալսարանի իրավաբանական բաժինը: 1904 թ. որպես կուսակցական գործիչ մեկնել է Սալմաստ, այնուհետև Բուլղարիա, որտեղ սովորել է կուսակցական զինվորական դպրոցում, հետո Սոֆիայի քաղավորական զինվորական ուսումնարանում, որն ավարտել է 1907 թ.: Ավարտելուց հետո վերադարձել է Կովկաս:

Յեղափոխական գործունեության համար ձերբակալվել է: 1912 թ. Անդրանիկի հետ մասնակցել է Բալկանյան պատերազմին:

1914 թ. ստանձնել է Յայկական երկրորդ կամավորական գնդի փոխհրամանատարությունը:

1918 թ. վճռական մասնակցություն է ունեցել Ղարաքիլիսայի կռիվներին:

1920–1921 թթ. դարձել է անկախ Զանգեզուրի նախարար և սպարապետ:

Ձերբակալվել է 1945 թ. Բուլղարիայում, որտեղից տարվել է Մոսկվա, Երևան, Սիբիր, նորից Երևան, հետո նորից Սիբիր, որտեղ 1954 թ. Վլադիմիրի բանտում մահացել է (կամ սպանվել):



ՊՈՂՈՍ ՏԵՐ–ԴԱՎԹՅԱՆ
Կապանի շրջանի Վերին Խոտանու 1918—1920 թթ. Սիսիանի ջոկատի հրամանատար, Նժդեհի զինակից

Ես երախտապարտ ու հպարտ եմ, որ եղել եմ Գարեգին Նժդեհի զինակիցը:







ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ (Արծիվ) ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
Ջոկատի հրամանատար, Նժդեհի զինակից

Ես երախտապարտ ու հպարտ եմ, որ եղել եմ Գարեգին Նժդեհի զինակիցը:



ՂԱԶԱՐՅԱՆ ԵՂՈ ԱՄԻՐՋԱՆԻ
(1880—1935)
Խմբապետ, Նժդեհի զինակից, գյուղ Բռնակոթ

Կոմունիստներն ինձ հալածեցին, բայց ես մնացի անփոփոխ:





# 1988 Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ



ՈՍԿԱՆՅԱՆ ՎՈՒՐԳ ԱՐՇԱԿԻ
Սիսիանի շրջանի զինված ջոկատ-ների հրամանատար

Հեղափոխության ժամանակաշրջանում
Էքստրեմիստներ անվանակոչվեցինք,
Դու հավերժ ֆիդայի՛, հերոսացար,
Ես կենդանի պատմիչ դարձա:
Սիսական գնդի առաջի՛ն զինվոր,
Ճամփա բացեցիր իմացյալ մահով,
Ֆիդայիներ են շուրջդ պառկած,
Դուք՝ հերոսներ, արծիվ զինվորներ:
Այսպես է եղել ամեն ժամանակ,
Շատ հերոսներ ենք ունեցել,
Հայրենասերները զոհ են դարձել,
Անճարները՝ գունափոխ իշխան:
Հեղինակ



Սիսականի կամավոր ֆիդայիները
Գնդապետ՝ Ազոյան Հովիկ







ՄԻՐԶՈՅԱՆ ՄԱՅԻՍ (ճակատ)
ԵՐՋԱՆԻԿԻ
Հայ դատի նվիրյալ 1988 թվակա-
նից, փոխգնդապետ

Ես վստահ եմ՝ ոճրագործ թուրքը
պատասխան կտա հայոց
եղեռնի համար:



ՈՍԿԱՆՅԱՆ ԿԱՄՈ ՄԻՍԱԿԻ
Բռնակոթ–Սիսիան
1990 թ. հատուկ գնդի վաշտի
հրամանատար

Հայրենիքը ինձ համար իմ
ընտանիքն է, իմ գալիք սերնդի
օրորանը, ես չեմ ափսոսում այն,
ինչ արել եմ: Ինչ չեմ հասցրել,
կանի իմ որդին:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԵՆՁԵԼ ՄԻՍԱԿԻ
Մտավորական, պատմաբան

Իմ զենքը եղել է իմ գրիչը՝ իմ հայոց պատմությունը, նաև իմ դիվանագիտությունը, որն օգտագործեցի Միքադի սահմանի մոտ ռուսական դեսանտներից ազատելու համար՝ փրկելով մեր ֆիդայիներին:



ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀԵՆՐԻԿ (Շանթ) ՀՈՎՍԵՓԻ
Նիկոլ Դումանի անվան ջոկատի տասնապետ

Դաշնակցությունը իմ վճիռն է, իմ հավատարմությունը իմ ազգին:







ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ (Փաշա) ԱՂՎԱՆԻ
Վաղատնի ինքնապաշտպանական ջոկատի տասնապետ

Ես իմ հոգով, հպարտությամբ նվիրյալն եմ իմ ժողովրդի: Սիրում եմ իմ ծննդավայրը՝ հայր օրրանը և մայր հայրենիքը:



ՆԱԶԱՐՅԱՆ ԼԱՎՐԵՆՏ (Լարո) ՀՐԱՆՏԻ
Բռնակոթ, տասնապետ



ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻՇԱ (Բագրիշ)
ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
գ. Անգեղակոթ, տասնապետ

Ես տուն եմ շինել
Իմ ծննդավայրում,
Պահապանն եմ իմ հայրենիքի
Ու կանգուն եմ իմ լեռների պես:



ԵՂՅԱՆ ԳԱԳԻԿ (Փանփ)
ԷՏՐԱՖԵՆԻ
Շաղաթի բնի վաշտի հրամանա-
տար

Իմ ուժը իմ լավ ընկերներն են
եղել: Ես նրանցով եմ հպարտ:







ՄԿՐՏՉՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ
(Ստարշինա) ԿԱՐԱՊԵՏԻ
գ. Շամբ
Ջոկատի պետ

Հայրենիքն իմ սրտի, հոգու
արմատներն են,
իմ պապերի ոստանը:



ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎՅԱՉԻՍԼԱՎ
ՍԱՐԳՍԻ
Ծնվ. 1940 թ.
Ռազմական 1–ին կարգի օդաչու
գ. Անգեղակոթ (բնակվում է գ.
Նորավանում)

Ես ուզում եմ՝ երկնքի պես պարզ
լինի մայրցամաքը:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ԼԱՐՈ ԱՐՍԵՆԻ
Նորավան գյուղի ջոկատի պետ

Միասնական լինելով՝ մենք հաղթեցինք: Գալիք սերնդին ճամփա բացեցինք:



ՄԻՆԱՍՅԱՆ ԱՇՈՏ (Աշոտ Երկաթ) ՀՐԱՆՏԻ
Սիսիանի տարածաշրջանի հրամանատար
գ. Լծեն–Սիսիան

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿ (Փոքրիկ) ՍՈՒԼԹԱՆԻ
ք. Սիսիան

Մենք դեռ կիսատ գործ ունենք. հարկավոր է Նախիջևանը վերադարձնել:







ԳԵՍԻՅԱՆ ԿԱՄՈ ՍԵՐԳԵՅԻ
Ծնվ. 1967 թ.
ք. Սիսիան

Մարդը գնացող է, հայրենիքն է մնայուն:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ ԶԱՎԵՆԻ
ք. Սիսիան

Ես չեմ թողնի՝ թշնամին մայր բույն քանդի: Հայրս օջախը ամուր է կառուցել:



ՄՈՒՐԱԴՅԱՆ ԲԱԿՈՒՐ ԱՐԱՄԻ
ք. Սիսիան

Իմ անձնական կյանքը իմ հայրենիքն է, օրինակն իմ սերնդին:



ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԱՆՎԵԼ (Աղալո) ՆԻԿՈԼԻ
գ. Վաղատնի

Զենքս վայր չեմ դնի մինչև հաղթանակը ու նորից պատրաստ եմ մինչև վերջ գնալու:







ԳԱՍՊԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ ԳՐԻՇԱՅԻ
գ. Տոլորս, կապավոր, «Նիկոլ Դուման» ջոկատից

Ուր էլ որ գնամ, ուր էլ որ մնամ՝ իմ հայրենիքի կարոտն եմ զգում, հոգով ու սրտով ձեզ հետ եմ ընդմիշտ:



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ ՎՐՈՒՅՐԻ
ք. Սիսիան, գ. Վաղատնի

Ափսո՜ս, շատ գործեր կիսատ մնացին: Ես հայրենասիրությունը ժառանգել եմ իմ ծնողներից և նվիրյալն եմ իմ հայրենիքի:



ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉԻ
գ. Վաղատնի

Իմ գրիչը ես փոխարինեցի զենքով և իմ պարտքը կատարեցի հայրենիքի հանդեպ:



ՕՀԱՆՅԱՆ ՆԵԿՏԱՐ ՌԱԴԻԿԻ
ք. Սիսիան
Բուժքույր

Ես մայրերին, քույրերին կոչ եմ անում օրհասական պահին լինել զինվոր և թև ու թիկունք կանգնել հայրենիքը փրկելու համար:







ԾԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԻԿ ՀԵՆՐԻԿԻ
ք. Սիսիան

Ես հպարտ եմ, որ կարողացել եմ իմ ամուսնու հետ մարտնչել հանուն մեր ազգի փրկության:



ՄԻՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ (Քեչ) ՄԻՍԱԿԻ
Երևան–Սիսիան

Ես շատ եմ սիրում իմ շանը, ատում եմ հակառակորդ թշնամուն:



ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՏՅՈՄ ՌՈՒԲԵՆԻ
Փոխգնդապետ

Ես զինվորն եմ իմ հայրենիքի մինչ օրս: Զենքս վայր չեմ դնի ու կմնամ այսպես:



ՀՈՎՍԵՓՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ ԱՍՊՈՅԻ
Հետախույզ, Հացավան–Սիսիան

Պարզ ու զուլալ ապրեցի և իմ կյանքը անժամանակ նվիրեցի հայրենիքիս:







ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՅՐԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ
Տասնապետ
գ. Վաղատնի

Ես ապրում էի Ռուսաստանում, ունեի աշխատանք, հայրենիքի օրհասական պահին ես վերադարձա իմ ծննդավայրը:



ՔՈՉԱՐՅԱՆ ԿԱՐՈ ԺԱՌԱՆԳԻ
գ. Նորավան

Հայրենիքը սկսվում է իմ ծննդավայրից, և ես սիրում եմ իմ ծննդավայրը:



ԱՎԱԳՅԱՆ ԱՐՍԵՆ ԱՐԱՐԱՏԻ
ք. Սիսիան

Ես մեծացել եմ մանկավարժի ընտանիքում, և հայրս միշտ մեր մեջ սերմանել է հայրենասիրություն և կրթություն:



ԱՎԱԳՅԱՆ ԱՇՈՏ ԱՐԱՐԱՏԻ
Կոմիսար
ք. Սիսիան

Լինելով մանկավարժի որդի՝ ես սիրել եմ իմ հայրենիքը և բնությունը, դրա համար սիրում եմ նկարել ու փորձս փոխանակել իմ սերնդի հետ:







ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԿԱՄՈ ՀԱԿՈԲԻ
ք. Սիսիան

Ես կատարել և պատրաստ եմ իմ փորձը փոխանցելու մատաղ սերնդին:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ ՍՏԵՓԱՆԻ
գ. Հացավան

Ես պատրաստ եմ իմ կյանքը նվիրելու հայրենիքիս:



ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԻԿԻ
գ. Վաղատնի

Ես սիրում եմ իմ ծննդավայրը և պատրաստ եմ պահպանելու իմ հայրենիքն ու իմ պապական օջախը:



ՓԱՆՅԱՆ ՍԻՄԱԿ (Բալաբեխ) ՄԱԴՈՅԻ
ք. Սիսիան

Ես օրինակն եմ իմ երիտասարդներին, պատրաստ եմ իմ հայրենիքը պաշտպանելու:







ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ ՌԱՖԻԿԻ
ք. Սիսիան

Ես միշտ ճշմարտությունը և հայրենասիրությունը վեր եմ դասել ու մնացել նույն հավատին:



ԵՍԱՅԱՆ ԱՐՏՈՒՇ ՅՈՒՐԻԿԻ
ք. Սիսիան

Նկարչությունը և արվեստը իմ մշտական ուղեցույցն են, կցանկանայի փոխանցել իմ սերնդին:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ՖԵԼԻՔՍ
ՎԱՐԴԱԶԱՐԻ
Ազատամարտիկ, հրապարա-
կախոս
ք. Սիսիան

Անկախության գաղափարը վեր
եմ դասում և հավատարիմ մնում
իմ սկզբունքին:



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ
(Ոսկոր) ՀՐԱՉԻԿԻ
ք. Սիսիան

Առանց հայրենիքի չկա կյանք,
մենք չանենք՝ ո՞վ անի:







ՍՏԵՓԱՆՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ
ԳՐԻԳՈՐԻ
ք. Սիսիան

Չիմացա՝ ինչպես անցավ իմ
կյանքը. միայն մի լավ բան
մնաց, որ հաղթեցինք:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎԻԿ (Գրադ)
ՀՈՎՍԵՓԻ
ք. Սիսիան

Ես միշտ օգնել եմ ընկերներիս և
կատարել իմ պարտքը
հայրենիքի ու իմ թոռների
հանդեպ:



ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՎԱՐԴԱԶԱՐԻ
գ. Վաղատնի

Սարերը ինձ ուժ են տալիս, որ հավատարիմ մնամ իմ ծննդավայրին: Ես էլ անցա ու գնացի, բայց հայրենիքը մնայուն է:



ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐՈ
ԾԵՐՈՒՆԻ
գ. Վաղատնի

Լեռները ինձ ուժ են տալիս ամուր կառչելու իմ հայրենի հողից:







ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
ՀԱՅԿԱԶԻ
գ. Վաղատնի

Ես որոշեցի որդեգրվել բանակի շարքերում՝ իմանալով, որ դա է մեր անվտանգության երաշխիքը:



ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԱՐՏԻԿ (կյաժ)
ՆԻԿՈԼԱՅԻ
ք. Սիսիան

Ես ինձ հպարտ եմ զգում, որ դարձա կամավոր երկրապահի անդամ:



ՍԱՄՍՈՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ ԱՐԿԱԴԻԻ
գ. Շամբ

Իմ մանկական խաղը դարձավ
ինձ համար իրական պայքար:



ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՏԵՓԱՆ
(Գեսիկ) ՄԿՐՏՉԻ
գ. Հացավան

Ես գիտակցում էի, որ առանց
երկրապահի հաղթելն
անհնարին է:







ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ
ԱՐՏԱՎԱԶԴԻ
գ. Վաղատնի

Ես պատրաստ եմ օրհասական
պահին լինելու
իմ ընկերների կողքին:



ՍԻՄՈՆՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ ՌԱՖԻԿԻ
ք. Սիսիան

Մեր պայքարի հաղթանակը մեր
միասնությունն է:



ԵՍԱՅԱՆ ՎԱՐԴԱՆ (Պլիմոտչիկ)
ՄՈՎՍԵՍԻ
ք. Սիսիան

Բրուտագործությունը իմ արհեստն է, սակայն իմ զենքով պաշտպանեցի իմ հայրենիքը:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ ԳՐԻՇԱՅԻ
ք. Սիսիան

Ես պատրաստ եմ զինվոր մնալու մինչև վերջ:







ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
ՏԻԳՐԱՆԻ
գ. Շաքի

Իմ գեղեցիկ ծննդավայրը Շաքին է, որտեղ ապրել և ապրում եմ իմ հայրենի գյուղում, որտեղ գտնվում է Շաքիի ջրվեժը:



ԱՎԱԳՅԱՆ ՎԼԱԴԻԿ (Լաղ)
ՊԼԱՏՈՆԻ
ք. Սիսիան

Ես միշտ ամուր եմ կանգնած իմ հայրենի հողի վրա և միշտ պատրաստ եմ պաշտպանելու:



ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆ ՀԱՅԿԻ
ք. Սիսիան

Ձենքը իմ սրտի մոտ է, նրանով է փրկության երաշխիքը:



ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԼՅՈՎԱ
(Յումորիստ) ԳԵՎՈՐԳԻ
ք. Սիսիան

Կյանքս կիսատ մնաց, չհասցրի ավելին անելու
իմ հայրենիքի համար:







ԹԱՆԳԻՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
ԱՂԱՅԱՆ ԿԱՄՈ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄՀԵՐ
գ. Բռնակոթ

Մենք հավաքական ուժ ենք, միայն դա է փրկության ճանապարհը:



ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՄԼԵՏ (Բալդի)
ք. Սիսիան

Հեռադիտակն ինձ օգնեց ավելի զգայուն լինել մարտի դաշտում թշնամիներից:



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ (Կյաժ) ԳԱՌՆԻԿԻ
ք. Սիսիան

Պայքարեցի դաժան, դժվար ճանապարհներին, սակայն անիմաստ մահով հեռացա կյանքից:







ՍԱՄՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ (Ջարդեմ) ԱՐԿԱԴԻԻ
գ. Շամբ

Միշտ զենքը իմ կողքին է եղել, և ամուր եմ հենված իմ ծննդավայրին:



ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐԻ
գ. Բարձրավան, ք. Սիսիան

Ես միշտ պատրաստ եմ լինելու իմ հայրենիքի զինվոր:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՖԵԼԻՔՍԻ
ք. Սիսիան

Գործերս կիսատ մնաց,
հաջողությունները՝ մատաղ
սերնդին:



ԹՈՐՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՌՈՒԲԵՆԻ
գ. Ույծ

Ես պատրաստ եմ միշտ
կանգնելու մատաղ սերնդի
կողքին,
իմ փորձը փոխանցելու:







ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՏԻԳՐԱՆԻ
ք. Սիսիան

Իմ ողջ ընտանիքի ուժն ու
եռանդը՝ իմ հայրենիքին:



ՔԱՐԱՄՅԱՆ

Ինձ համար ճշմարտությունը
միշտ հայրենիքի զինվոր
լինելն է:



ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
(Պարտոս) ԿՈԼՅԱՅԻ
գ. Սալվարդ, ք. Սիսիան

Զենքն ինձ հետ պետք է լինի օր ու գիշեր:



ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԱՏՈԼԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
գ. Շաղաթ

Ես ապրում եմ իմ հայրենի գյուղում, որտեղից սկսվում են սահմանները:







ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ
ՊԵՏԻԿԻ

Ես միշտ պատրաստ եմ հսկելու մեր սահմանները և օրինակ ծառայելու շատերին:



ԳԵՎՈՐԳՅԱՆ ԲԱԲԿԵՆ
ՀՐԱՉԻԿԻ
գ. Նորավան

Ծառայել եմ և կծառայեմ հանուն մեր հայրենիքի ամրապնդման:



ՎԱՀԱՆՅԱՆ ԿԱՐՈ ՍԱՐԳՍԻ
գ. Վաղատնի

Այսպես եղել եմ, այսպես էլ կմնամ:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ (Չիբուխ) ՄԱՐՏԻՐՈՍԻ
ք. Սիսիան

Իմ սպորտը օգտագործել եմ իմ կյանքում, նաև պետք եղա առողջ պայքարելու:







ՂԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ ԱՐԱՄԱՅԻՍԻ
ք. Սիսիան

Ի՞նչ իմանայի, որ այսպես կլիներ, ես կատարեցի իմ պարտքը հայրենիքի հանդեպ:



ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՄԱՅԻՍ ՎՈԼՈԴՅԱՅԻ
գ. Բռնակոթ

Ես միշտ ապրել եմ իմ համեստ աշխատանքով և զինվորն եմ հայրենիքիս:



ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՎՈԼՈԴՅԱՅԻ

Ես սիրում եմ բնությունը. իմ մեջ արթնացնում է հողին ամուր հենվելու զգացողություն:



ՎԱՀԱՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ (Արջ)
ՀՈՎՍԵՓԻ
գ. Վաղատնի

Ամուր եմ ինձ զգում: Մեր Իշխանասարի ուժը ինձ հաղորդեց ավելի նվիրյալ լինել:







ԶԱՔԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ ՉԱՊԱՅԻ
գ. Շամբ

Այսպես է եղել ամեն ժամանակ. մեկը ստեղծել է, մյուսը՝ վայելել:



ԱՂԱՋԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՊԱՐԳԵՎԻ
գ. Սպանդարյան

Ես միշտ ինձ զգացել եմ հայրենիքի զինվոր և շարունակում եմ մնալ այսպես:



ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
(Չալղուն) ԼԵՎՈՆԻ

Ես սարերից չեմ իջել և ինչքան բարձրացել եմ, այնքան հզորացել եմ:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԷՄԻԼԻ
գ. Ույծ

Ես հավատարիմ եմ իմ ծննդավայրին. այս է պատգամը մյուսներին:







ԲԱՐՍԵՂՅԱՆ ՖՐՈՒՆԶԵ ՇԱՀՈՒՆԻ

Ես միշտ պատրաստ եմ ինձ հանձնարարված զինվորական պարտավորությունները կատարելու:



ԵՍԱՅԱՆ ԺՈՐԱ (Եսայի)
ՄՈՎՍԵՍԻ
ք. Սիսիան

Ես շատ եմ սիրում իմ հայրենի բնությունը, դրա համար միշտ լինում եմ իմ հայրենի սահմանամերձ գոտում:



ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՄԼԵՏ (Կոնֆետ)
ՎԱՂԱՐՇԱԿԻ
ք. Սիսիան

Դեռ պատերազմը չի վերջացել, այն չունի սկիզբ և ավարտ, միշտ հարկավոր է պատրաստ լինել:



ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ ՄԻՇԻԿԻ
գ. Տոլորս

Ես միշտ հավատացել եմ մեր հաղթանակին, որովհետև մենք արդարության համար ենք պայքարել:







ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՊԵՏԻԿ
ՎԱՀՐԱՄԻ
գ. Հացավան

Մեր հայրենիքի պաշտպանությունը իմ գյուղին հավատարիմ մնալու մեջ է:



ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ ՍԵՐԳԵՅԻ
ք. Սիսիան

Իմ զենքը միշտ եղել է, պատրաստ եմ թշնամուն հակահարված տալու:



ՍՏԵՓԱՆՅԱՆ ԳԱԳՈ ԳՐԻՇԱՅԻ
ք. Սիսիան

Ես հպարտ եմ մեր հաղթանակով և հիմա էլ աշխատում եմ այն տեղերում, որտեղ մարտնչել եմ թշնամիների դեմ:



ՔԱՐԱՄՅԱՆ ԱՇՈՏ
գ. Նորավան

Հպարտ եմ և վստահ, միշտ պատրաստ եմ իմ պարտքը կատարելու հայրենիքի հանդեպ:







ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
(Ասկոլկա) ԱՐՇԱԿԻ
ք. Սիսիան

Թշնամու գնդակը անցավ իմ մարմնի մեջ, սակայն ես կանգուն եմ ու կմնամ այսպես:



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷԴՎԱՐԴ
(Մատաղ) ԱԼԲԵՐՏԻ
ք. Սիսիան

Ինձ վրա վերցրի մի պարտականություն. իմ բազմազավակ ընտանիքը փրկել թշնամիներից:



ԳՈՒՄՇՈՒԴՅԱՆ ՄՀԵՐ ՍՈՒՐԻԿԻ

Իմ կայունությունը իմ մայր հողին ամուր հենվելն է, ինչպես արմատների ամրությունը հողի մեջ:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ԼՅՈՎԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ
ք. Սիսիան

Ես միշտ սիրել եմ ճամփորդությունը, և դա ինձ ուժ է տվել սիրելու իմ հայրենիքը:







ԴԻԼԱՆՅԱՆ ԱՐԱՄ ԵԳՈՐԻ
գ. Բռնակոթ, ք. Սիսիան

Ես ունեմ սկզբունք՝ միշտ լինել հավատարիմ իմ հայրենիքի համար:



ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ
ՄԻՇԱՅԻ
գ. Շաղաթ

Ես մեծացել եմ սահմանամերձ գոտում՝ սարերի մեջ, և սարերը ինձ հզորություն են հաղորդում և ուժ պարգևում:



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՎՐՈՇ ՄԻՇԱՅԻ
գ. Նորավան

Հայրենիքը սկսվում է սահմաններից, դրա համար ես մնացել եմ իմ հայրենի գյուղում:



ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ (Յունան) ԺՈՐԱՅԻ
գ. Բռնակոթ

Հավատացել եմ մեր հաղթանակին, և կհաղթենք, եթե օտարները նորից փորձեն մեզ վրա հարձակվել:







ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ ԿԱՌԼԵՆԻ
գ. Բռնակոթ

Այսպես է եղել մեր ճակատագիրը, միշտ ենթարկվել ենք փոփոխությունների, իսկ հիմա ունենք բանակ. դա է մեր երաշխիքը:



ՍԱՄՍՈՆՅԱՆ ՄՀԵՐ ՖՐԱՆԳՈՒԼԻ
գ. Շամբ

Ապրել եմ հեռավոր մի անտառաշատ գյուղում, որտեղ ստացել եմ ուժ բնություն հրաշքից:



ԴԱՎԹՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ԳԵՎՈՐԳԻ
գ. Շաքի

Միշտ հավատացել ենք թշնամիներին, որ ոչինչ չի լինի, սակայն ապրել ենք ու կապրենք:



ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԳԵՍԻ
գ. Շամբ

Երբեք չմնալ առանց զենքի և չվստահել թշնամուն:







ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ (Վիվա)
ՄԱՅԻՍԻ
ք. Սիսիան

Պետք է նայել հեռու, լինել զգույշ ու զգայուն թշնամու հանդեպ:



ԱՎԱԳՅԱՆ ՇԱՀԵՆ ՄԻՀՐԱՆԻ
գ. Շաքի

Նպատակների իրագործումը կախված է խաղաղությունից և թշնամու հանդեպ զգայուն լինելուց:



ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵՎԱԴԱ (Սևո)
ՍՈՒՐԵՆԻ
գ. Շամբ

Ջրերը, սարերը ինձ
ամրություն են հաղորդել՝
մնալու ամուր իմ հայրենի
գյուղում:



ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԳՈՒՐԳԵՆԻ
գ. Ույծ

Ի՞նչ իմանայի, որ թշնամին
անգութ է, որ մեկ օր իմ
մանկական խաղը կվերածի
պատերազմի:







ՔԱՐԱՄՅԱՆ ԱՆԴՐԵԱՍ ՅՈՒՐԻԿԻ
գ. Նորավան
Երկիրը մերն է, հողը՝ պապենական, նա է մեզ սնել և ուժ տվել
մնալու հավատարիմ ակունքին:




ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ (Ճուտո) ՎՈԼՈԴՅԱՅԻ
ք. Սիսիան
Ես իմ կյանքի շնորհիվ ճամփա բացեցի գալիք սերնդին,
որ լավ ապրի և չմոռանա մեզ:



ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ
գ. Շամբ

Վերջապես մեր նախկին հագուստը փոխարինվեց մեր ազգային հագուստով:



ԱՎԱԳՅԱՆ ԱՐԱՄ ԿՈԼՅԱՅԻ
գ. Անգեղակոթ

Ինձ ամուր ու հպարտ եմ զգում՝ միշտ ուղիղ նայելով իմ լավատեսությանը:







ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ ՎԱՆՅԱՅԻ
գ. Շամբ

Մենք միշտ եղել ենք, կանք ու կլինենք:



ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԻՇԱՅԻ
գ. Շաղաթ

Եղե՛ք զգայուն, միշտ պատրաստ պաշտպանելու մեր երկիրը:



ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
ԱՐԾՐՈՒՆՈՒ
գ. Շամբ

Ուժեղներն են միշտ հաղթել անարդարներին:



ԱՇՈՏՅԱՆ ԱՐՄԵՆ ԿՈՄԵԴԻ
գ. Բռնակոթ

Եկեք մի քիչ մտածենք և ամուր կանգնենք մեր հողի վրա:







ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆՈՐԻԿ
ԵՆԳԻԲԱՐԻ
գ. Շամբ

Աշխատանք, սեր և միասնություն մեր ազգին:



ՊԱՊՅԱՆ ԴԱՎԻԹ ՄԵԼՍԻ
ք. Սիսիան

Զինվորն եմ իմ հայոց երկրի, կամ, կլինեմ այսպես:



ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ
գ. Շամբ

Իմ ընտանիքը իմ հայրենիքն է, պարտավոր եմ ամրացնել, հզորացնել իմ հողի վրա:







ՍԱՄՍՈՆՅԱՆ ԱՐՏԱԿ ԱՐԿԱԴԻԻ
գ. Շամբ

Ես սիրում եմ իմ օջախը շենացնել և շարունակել պահպանել պապերիս ավանդույթը:



ԱՐՇԱԿՅԱՆ ԱՇՈՏ ՊԱՎԼԻԿԻ
ք. Սիսիան

Միշտ պատրաստ եմ իմ հայրենիքը պաշտպանելու:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆՈՐԻԿ
(Կոմանդիր) ՄԻՔԱՅԵԼԻ
գ. Շաղաթ

Ես պարտավոր եմ հավատարիմ մնալ իմ երդմանը և միշտ լինել հայրենիքի զինվոր:



ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՌԱՖԻԿԻ
գ. Սպանդարյան

Որտեղ էլ գնամ, իմ երկրից լավը չկա, քանի որ ծնվել եմ իմ հայրենի գյուղում:







ԽԱՉԱՏՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ
ՆԻԿՈԼԱՅԻ
գ. Շամբ

Ամուր եմ կանգնած իմ հողի վրա. այս է իմ պատգամը՝ իմ խոսքը շիտակ:



ՀԱԿՈԲՅԱՆ ԺՈՐԱ ՅՈՒՐԻԿԻ
գ. Ախլաթյան

Այսպես եղել եմ, կմնամ նվիրված իմ հայրենիքին:



ՄԿՐՏՉՅԱՆ ՍԼԱՎԻԿ (Կանտուզիա) ՎԱՂԱՐՇԱԿԻ
գ. Շաղաթ

Իմ լեռները իմ կյանքի իմաստն են, իմ տունը և ընտանիքը:







ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
գ. Անգեղակոթ

Մեր քարերը շատ հին են, մեր պապերը՝ դարեդար բնիկ:



ԴԱՎԹՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ
գ. Անգեղակոթ

Իմ օրորանը իմ մայրական օրորոցն է, որտեղ ծնվել եմ ես:



ԱՍՐՅԱՆ ԳՐԱՎԻՉ ԲԱՂԱՏԻ
գ. Շամբ

Ես ուրիշ տեղ չեմ կարող ապրել,
սիրում եմ իմ ծննդավայրը:



ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ (Պացան)
ՎԱՐԴԱՆԻ
գ. Շաղաթ

Ես հավատում եմ՝ մեր
հաղթանակն ունի ապագա:







ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ ԳԱՌՆԻԿԻ
գ. Նորավան

Հայրենիքս պատրաստ եմ
ընդմիշտ պաշտպանելու:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՅՐԱՆ
ԽԱՉԱՏՈՒՐԻ
ք. Սիսիան

Ես սիրում եմ իմ երկիրը, այն իմ
ծննդավայրն է, իմ
հպարտությունը:



ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՅԻՍ ՌԱԶՄԻԿԻ
գ. Սպանդարյան

Սարերը, իմ ծորերը ինձ ուժ են տալիս ամուր հենվելու իմ հայրական հողին:



ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԳԱԳՈ ՊԱՐԳԵՎԻ
գ. Անգեղակոթ

Այս երկիրը մե՛նք պետք է պահենք, ուրիշ էլ ո՞վ:







ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՍԱՀԱԿ ԱՊԵՏՆԱԿԻ
գ. Սպանդարյան

Ես միշտ պատրաստ եմ ամենադժվար պահերը հաղթահարելու և օրինակ դառնալու իմ սերնդին:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՆԻԿՈԼԱՅԻ
գ. Շամբ

Ես, նայելով հեռուները, տեսնում եմ մեր ապագան:



ՍՏԵՓԱՆՅԱՆ ՌՈՒԲԻԿ
(Քյանդրբազ) ԱՊԵՏՆԱԿԻ
գ. Շաղաթ

Ես ուղիղ եմ նայում կյանքին և
հավատում եմ իմ
վստահությանը:



ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՀՄԱՅԱԿԻ
ք. Սիսիան
Նկարիչ

Արվեստագետը ապագային
միշտ նայում է լավատեսորեն:







ՍԱՄՍՈՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ ԱՐԿԱԴԻԻ
գ. Շամբ

Իմ պապերը հիմքն են իմ մայր
հողի ու խոր արմատներ ունեն
դարերից:



ԱՂԱՅԱՆ ՄՈՒՐԱԴ ՇԱՀԵՆԻ
գ. Բռնակոթ

Մենք միշտ կառուցել ենք,
շենացրել մեր պապերի օջախը:



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷԴՎԱՐԴ ՌՈՒՍՏԱՄԻ
գ. Մարտակերտ, ք. Սիսիան

Ինձ համար թանկ է ամեն մի տարածք հայոց հողերի:



ԲԼԲՈՒԼՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՌԱՖԻԿԻ
գ. Նորավան

Ես հավատում եմ՝ մեր ապագան լավ է լինելու:







ՄԱՐԳԱՐՅԱՆ ՎԱՐՇԱՄ ՀԱՅԿԻ
գ. Նորավան

Ես շատ եմ սիրում իմ ծննդավայրը, պատրաստ եմ իմ փորձը փոխանցելու իմ սերնդին:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱՅՐ ՖԵԼԻՔՍԻ
ք. Սիսիան

Հայրենիքը ինձ համար ամենաբարձր արժեքն է ու սկզբունքը:



ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՏԵՄ
գ. Շամբ

Հաղթանակը մեր կոլեկտիվ, միասնական ուժի երաշխիքն է:



ՄՈՒՐԱԴՅԱՆ ՕԼԵԳ ՍԵՐՈԲԻ
գ. Շաղաթ

Ես միշտ պատրաստ եմ պաշտպանելու իմ հայրենի հողը:







ՕՀԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ
գ. Շաղաթ

Ես սիրել եմ իմ լեռների ամեն մի թուփը:



ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԻԿ ԲԱԳՐԱՏԻ
գ. Նորավան

Ես հավատում էի, որ մենք կհաղթենք:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
ԽԱՉԻԿԻ
ք. Սիսիան

Ես միշտ պատրաստ եմ ու հպարտ, կլինեմ այսպես:



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐԺԻԿ
Արցախ, Սիսիան

Ինձ համար իմ հայրենիքը սկսվում է հայոց տարածքներից:







ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
ԱԼԲԵՐՏԻ
գ. Շաղաթ

Հագուստս ռուսական է, հոգիս՝ հայկական:



ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ ԲԱԳՐԱՏԻ
գ. Բալաք

Մեկ օր ես կհագնեմ մեր հայկական բանակի համազգեստը:



ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՍԵՅՐԱՆ
ՌԱԶՄԻԿԻ

Մեր երկրի պետականությունը ազգի հարատևությունն է:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՅՈՎՍԵՓ
ՍԵՅՐԱՆԻ

Ամեն մի հայ պետք է լինի զինվոր և ուրախանա իր անցյալով:







ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ ԺՈՐԺԻԿԻ
ք. Սիսիան

Իմացյալ մահով գնացի, սակայն հավատացի, որ հաղթանակը մերն է լինելու:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀԱՆ
ՎԱՐԴԳԵՍԻ
ք. Սիսիան

Մեր հպարտությունը մեր հաղթանակն է:



ԱՍՐՅԱՆ ՄԱԿԻՉ ԲԱՂԴԱՍԱՐԻ
գ. Շամբ

Հպարտ եմ եղել ու կմնամ այսպես:



ՊՈՂՈՍՅԱՆ ՋԻՎԱՆ ՔԱՋԻԿԻ
գ. Բարձրավան

Բարձր գոտու սահմանում եմ ծնվել, և ինձ համար այն ամենահարազատն է:







ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ՍԵՅՐԱՆ ՌԱԶՄԻԿԻ
գ. Նորավան

Այս է մեր հողը, և մենք ենք տերը:



ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ ԺՈՐԱՅԻ
գ. Շամբ

Ջրերը մեզ ուժ են տալիս, ամրություն հաղորդում մեր հայրենիքին:



ՍԱՀԱԿՅԱՆ ՍԵՆԻԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
գ. Շամբ

Հպարտ եմ իմ հայոց երկրին ծառայելու:



ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԳԵՆԻ
գ. Բռնակոթ

Իմ զինվորական հագուստը ինձ պարտավորեցնում է լինել նվիրյալ իմ երկրին:







ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ ՌԱՖԻԿԻ
գ. Սպանդարյան

Հայրենասիրությունը իմ երկրին ծառայելն է:



ՍԼԱՎԻԿ

Պետք է միշտ պատրաստ լինել և զգայուն հանուն հայրենի երկրի:



ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱԳԻԿ ՄՈՎՍԵՍԻ
գ. Շամբ

Հպարտ ապրել, հարկավոր է լինել հայրենիքի զինվոր:



ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ
գ. Շաղաթ

Միշտ սիրել եմ իմ հայրենիքը և պատրաստ եմ նվիրվելու:







ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՄԼԵՏ ՎԱՉԻԿԻ
գ. Շաղաթ

Առանց հավատի չկա նպատակ, առանց նպատակի չկա հավատ:



ՕՀԱՆՅԱՆ ՄԱՐՏԻԿ ԳՐԻՇԱՅԻ
գ. Նորավան

Նպատակով և միասնությամբ հաղթանակեցինք:



ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ՎՈԼՈԴՅԱՅԻ
գ. Շաղաթ

Ես հպարտ եմ մեր եռագույնով
և մեր հաղթանակով:



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
ԱՍԱՏՈՒՐԻ

Հաղթանակը եղավ մեր
հավատով և մեր
միավորվածությամբ:







ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
(Բեղլու) ԳԱԳԻԿԻ
գ. Բռնակոթ

Միշտ պատրաստ ենք
հակահարված տալու մեր
հակառակորդներին, եթե
չհասկանան մեզ:



ԱՅՎԱԶՅԱՆ ԼԵՌՆԻԿ
ԲԱՂԴԱՍԱՐԻ
ք. Սիսիան
Թիկունքի կազմակերպիչ

Թիկունքը ծառայություն է, որը
ապահովում է և վստահություն
հաղորդում ճակատի
վստահությանը և ամրապնդում
հաղթանակի առաջընթացը:



ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԵ ԷԴԻԿԻ
ք. Սիսիան

Հաղթանակը երջանկություն բերեց մեր գալիք սերնդին:



ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՉԻԿ ՎՈԼՈԴՅԱՅԻ
գ. Բռնակոթ

Ես միշտ պատրաստ եմ կյանքս նվիրելու հայրենիքին:







ԲԱՐՍԱՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ ՀՐԱՆՏԻԿԻ
գ. Նորավան
Ինքնապաշտպանական ջոկատի ղեկավար

Զգայուն լինել միշտ և հավատարիմ մեր պետականության գաղափարի համար:



ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ ՎԱՆՅԱՅԻ
գ. Շամբ

Հին է մեր երկիրը, ամուր է մեր պապերի հիմք դրած օրրանը:



ԹԱՆԳԻՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԼԵՎԻԿԻ

Ամուր լինել և հավատարիմ՝ մեր երկրին:




ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ (Ակուլե) ՄԿՐՏՉԻ







ԽՍԱՋԱՆՅԱՆ ՄԱՅԻՍ ՄԻՍԱԿԻ
ք. Սիսիան

Հայը նվիրյալ, լավ զինվոր է, որտեղ էլ ծառայի, ավելին՝ իր հայրենիքի համար ապացույցը արցախյան հաղթանակն էր:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌՈՒԴԻԿ ԱԼԻԿԻ
գ. Շաքե

Մեր անցյալ պատմությունը ունեցել է դառը ճակատագիր, գոնե պահպանենք հաղթանակից հետո:



ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՇՈՏ ԳԱՌՆԻԿԻ
գ. Տոլորս

Հպարտ եմ իմ ազգի հաջողություններով, միշտ կլինեմ այսպես:



ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԱՐԱՏ ՄԱՆՎԵԼԻ
ք. Սիսիան

Ես զինվորագրվեցի արցախյան պայքարին և մնացի հավատարիմ զինվոր:



Խաչատրյան Հովիկ (Վովա) Հովսեփի
ք. Սիսիան

Պետք է լինել զգույշ և արթուն. թշնամին քնած չէ:



ՄԱՅԻԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ (Փաշա) ՌԱԶՄԻԿԻ
ք. Սիսիան

Թշնամուն հաղթեցինք մեր հավաքական ուժով:



ԴԻԼԱՆՅԱՆ ԺՈՐԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
գ. Բռնակոթ
Փոխգնդապետ, Շերիֆի հետ
հատուկ գունդ

Ես զինվորագրվեցի և մինչև
վերջ զինվոր մնացի:



Մենք այսպես ենք եղել:
Նվիրյալները







Զինկոմի կանչով



Սիսյանի ֆիդայիները







ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ
գ. Հացավան

Ես նայում եմ հեռուներ և գտնում եմ, որ առանց բանակի չկա երաշխիք գոյատևման:



ՆԱԶԱՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ ՍԵՆԻԿԻ
գ. Սպանդարյան

Զինվորական լինել ես սիրել եմ մանկուց:



ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ (Տանկիստ) ՄԵԼՍԻԿԻ
գ. Սառնակունք



ՄԿՐՏՉՅԱՆ ԻԳՈՐ ԼՅՈՎԱՅԻ
ք. Սիսիան

Միայն զենքով կա փրկություն:







ՊՈՂՈՍՅԱՆ ԶԻՎԱՆ ՔԱՋԻԿԻ
գ. Բարձրավան

Ապրել եմ սարերում, հպարտ կանգնած եմ սահմանում:



ՍԱՐԳՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ ՎԱԶԳԵՆԻ
գ. Շաքի

Ես զինվորն եմ իմ հայոց երկրի:



ԽԱՉԱՏՐՅԱՆ (Ակաես)
ԱՇՈՏ

Ես հպարտ եմ իմ հայոց երկրի համար:



ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԵՍՐՈՊ
ԼՅՈՒԴՎԻԳԻ
գ. Շաղաթ

Եկե՛ք միասնական լինենք, որ միշտ հաղթենք:







ՎԱՐԴԱՆՅԱՆ ՊԵՏԻԿ

Մեր մանկական խաղը դարձավ իրականություն:



ՄԿՐՏՉՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՍԱՏՈՒՐԻ

Եթե միասին լինենք, միշտ կհաղթենք:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ԱՍԱՏՈՒՐԻ
գ. Շաքե

Պարտավոր եմ իմ երեխաների և հայրենիքի համար լինել հպարտ:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՇԱԿ
ԿՈՄԵԴԻ
գ. Շաքե

Ամուր կանգնել և հավատարիմ լինել հողին ու ջրին:







ՂԱԶԱՐՅԱՆ ՄԻՇԱ ԱՐԾՐՈՒՆՈՒ
գ. Շաքե



ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՐԱՅՐ
ՄՆԱՑԱԿԱՆԻ
գ. Շաքե

Մեր երկրի ուղեցույցը մենք ենք, գալիք սերնդին հաղորդելու ենք մեր փորձը:



ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՋՈՐԱՎԻԿ ՍԱՀԱԿԻ
գ. Շաքե

Ես հավատացել եմ մեր հաղթանակին:



ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՆՏ ԱՐԱՄԻ
գ. Անգեղակոթ

Ես միշտ պատրաստ եմ թշնամուն հակահարված տալու:







ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱԼԻՆԱ ՖՐՈՒՆԶԻԿԻ
գ. Շաքե

Կինը մայր է, հարկ եղած դեպքում՝ զինվոր:



ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՎՐՈՇ ՄԿՐՏՉԻ
գ. Անգեղակոթ
Դասակի հրամանատար

Մենք միշտ պետք է գիտակցենք, որ փրկությունը արթուն լինելն է թշնամու հանդեպ:



ԴԱՆԻԵԼՅԱՆ ՅՈՒՐԻ ՎԱԶԳԵՆԻ
գ. Շաքե

Զինվոր լինել հայրենիքին հպարտություն է:



ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՐԱՄԱՅԻՍԻ
գ. Շաքե

Պետք է միշտ ամուր կանգնել, որ հաղթենք թշնամուն:







ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՎԱ (Դևո) ԱՆԴՐԱՆԻԿԻ
գ. Անգեղակոթ

Կյանքս, հոգիս՝ հայրենիքիս և իմ ազգին:



ԵՓՐԵՄՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ ԼԻՊԱՐԻՏԻ
գ. Անգեղակոթ

Հայրենիքը մնայուն է:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴՄԻՏՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ
գ. Անգեղակոթ

Առանց հայրենիքի անիմաստ է ապրել որևէ տեղ:



ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐԱՄ ՌԱԶՄԻԿԻ
գ. Անգեղակոթ

Հավատարիմ մնալով իմ երդմանը՝ միշտ պատրաստ եմ պաշտպանելու իմ երկիրը:







ԽԱՉԻԿՅԱՆ ԳԱԳԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ
գ. Անգեղակոթ

Հայրենիքը մնայուն է, բոլորը՝ անցողական:



ՄԻՐԶՈՅԱՆ ՍԱՍՈՒՆ ՕՆԻԿԻ
գ. Անգեղակոթ
Թուրքի «Դոշման»



ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԲԻԿ
ՎՈԼՈԴՅԱՅԻ
գ. Անգեղակոթ

Ոչ մի անգամ անտարբեր չեմ լինի իմ հայրենիքի նկատմամբ:



ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՎԼԱԴԻԿԻ
գ. Անգեղակոթ

Ես միշտ եղել եմ այսպես:







ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՒԲԻԿ ԳՎԻԴՈՆԻ
գ. Անգեղակոթ

Հեռուն նայելով՝ տեսնում եմ մեր ապագան:



ՕՀԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ (Արջ)
ԱՅՎԱԶԻ
գ. Անգեղակոթ

Թշնամի եղիր, խելոք՝ իմ ձեռքից չեք վրիպի:



ԵՍԱՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ ԱՐԱՄԱՅԻՍԻ
գ. Անգեղակոթ

Ես հավատարիմ եմ իմ սկզբունքներին:



ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԵՄ ՎՈԼՈԴՅԱՅԻ
գ. Անգեղակոթ

Հպարտ եմ մեր սարերի պես ու նվիրյալ՝ իմ ծննդավայրին:







ԽԱՉԻԿՅԱՆ ԱՐՄԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ
գ. Անգեղակոթ

Ես վաղուց երազել եմ՝ իմ հագուստը փոխարինվի հայկական տարազով:



ԲԱՂԻԿՅԱՆ ՀՐԱՅՐ ԱԼԲԵՐՏԻ
գ. Անգեղակոթ

Իմ ծննդավայրը իմ հենարանն է հավերժ:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ
գ. Անգեղակոթ

Ես սիրում եմ իմ ծննդավայրը:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ԷԴԻԿ ՔԱՋԻԿԻ
գ. Անգեղակոթ

Ոչինչ չեմ ների անարդարության համար:







ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ ՊԱՎԼԻԿԻ
գ. Անգեղակոթ

Երբեք թշնամին իմ պապենական հողը չի կարող տրորել:



ՄԱՆՈՒԿՅԱՆ ՇԱՀԵՆ ԳՐԻՇԱՅԻ
գ. Անգեղակոթ

Հավատարիմ մնալ, որպեսզի մեր փործը հաղորդենք մեր սերնդին:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
ԱԼԲԵՐՏԻ
գ. Անգեղակոթ

Ես երջանիկ եմ, որ հաղթեցինք թշնամուն:



ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՍՈՒՆ ԲԵՆԻԿԻ
գ. Անգեղակոթ

Հաղթանակը մեր ոգու ուժն էր ու միասնությունը:







ՄԿՐՏՉՅԱՆ ՍԼԱՎԻԿ
ՎԱՂԱՐՇԱԿԻ
գ. Անգեղակոթ

Կատարեցինք մեր պարտքը հայրենիքի և
մեր ընտանիքի հանդեպ:



ԵՆՈՔՅԱՆ ԼՅՈՎԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ
գ. Անգեղակոթ

Ամուր եմ, հպարտ, միշտ պատրաստ եմ կռվելու թշնամու դեմ:



ՋԱՎԱԴՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ
ՋՈՒՄԵՌՆԻԿԻ
գ. Անգեղակոթ

Ես միշտ հավատացել եմ մեր հաղթանակին:



ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
ՇԱՎԱՐՇԻ
գ. Անգեղակոթ

Մենք ծով չունենք, ծովակալ ունենք:







ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԿՈՒՐ ԳՐԻՇԱՅԻ
գ. Անգեղակոթ

Մեր սարերի, ձորերի մեջ է մեր հզորությունը, որ միշտ ուժ է տվել:



ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՇԱՎԱՐՇԻ
գ. Անգեղակոթ

Ես տեսա շատ դժվար ու դաժան պահեր, բայց երբեք չհուսահատվեցի:



ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ՊԱՐԳԵՎԻ
գ. Անգեղակոթ

Մանկական կռիվ խաղը
դարձավ իրականություն, և
մենք հաղթեցինք:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՐՈՒՅՐ ԱՐՏԵՄԻ
գ. Անգեղակոթ

Միշտ հիշե՛ք, որ թշնամին
քնած չէ:







ՋԱՎԱԴՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԹԵԼՄԱՆԻ
գ. Անգեղակոթ

Թուրքը կարմիր խնձոր լինի՝
չհավատաս:



ՄԿՐՏՉՅԱՆ ՄԻՆԱՍ ՍԵՅՐԱՆԻ
գ. Անգեղակոթ

Շան հետ ընկերացի՛ր, բայց
փայտը ձեռքիցդ չգցես:



ԵՍԱՅԱՆ ՇԻՐԱԶ
ԱՐԱՄԱՅԻՍԻ
գ. Անգեղակոթ

Ոգու ուժի և միայն միասնության շնորհիվ հաղթեցինք:



ԵՆՈՔՅԱՆ ԳԱԳԻԿ
ԱՆԴՐԱՆԻԿԻԿԻ
գ. Անգեղակոթ

Մեր հաղթանակը հավերժ է ու մնայուն:







ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԼԱԴԻԿ
ՍԵԴՐԱԿԻ
գ. Անգեղակոթ

Ես միշտ պատրաստ եմ պաշտպանելու մեր հայրենիքը:



ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՎՐՈՇ
ՎԱՀԱՆԻ
գ. Անգեղակոթ

Ես իմ պարտքը կատարել եմ իմ հայրենիքի հանդեպ:



ՊՈՂՈՍՅԱՆ ԺՈՐԱ ՄՆԱՑԱԿԱՆԻ
գ. Անգեղակոթ

Միշտ պետք է զգայուն ու պատրաստ լինել թշնամուն հարված հասցնելու:







ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿԱՐՈ ՎԱՂԱՐՇԱԿԻ
գ. Անգեղակոթ

Մենք դեռ կորցրած հողեր ունենք հետ բերելու:



ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ ՊԱՐԳԵՎԻ
գ. Անգեղակոթ

Միշտ պետք է պատրաստվել հզորանալու և պահպանելու մեր երկիրը:



ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՈՎԻԿ ԱՐՇԱԿԻ
գ. Անգեղակոթ

Ես միշտ պատրաստ եմ ամեն մի պահի համար:



ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՈՒՍԻԿ ԱՐՇԱԿԻ
գ. Անգեղակոթ

Մենք պետք է արթուն լինենք թշնամի օձերի համար:







ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐՏԻԿ ԳԱՌՆԻԿԻ
գ. Անգեղակոթ

Այն, ինչ արել ենք, քիչ ենք արել, դեռ պիտի շարունակենք:



Արշակ Աղաջանյան
«Դերսու – Ուզալա»

Հայրենիքը սկսվում է ընտանիքից.
Ես շատ եմ սիրում իմ բալիկին:







Գորիսի կամավորներ
Նրանք ապրեցին հանուն Հայաստանի Հանրապետության անկախության գաղափարի:



Գորիսի կամավորներ
Նրանք ապրեցին հանուն Հայաստանի Հանրապետության
անկախության գաղափարի:







Գորիսի կամավորներ
Նրանք ապրեցին հանուն Հայաստանի Հանրապետության
անկախության գաղափարի:



ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ՊԱՐԳԵՎԻ
գ. Անգեղակոթ

Հպարտ եղել եմ, հպարտ պետք է պայքարեմ:







ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԵՆԳԻԲԱՐ ՎԱՂԱՐՇԱԿԻ
գ. Անգեղակոթ

Իմ փորձը փոխանցում եմ իմ բալիկներին ու հաղորդում, որ միշտ պատրաստ լինեն թշնամու դեմ:



ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄԵԼՍԻԿ ԱՐԱՄԻ
գ. Անգեղակոթ

Մենք հաղթեցինք մեր հավաքական, միասնական պահով:



ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԻԿ ԱՐՓԻԱՐԻ
գ. Անգեղակոթ

Մեր տղաներից ամեն մեկը ամուր զինվոր է:





# ԲԺԻՇԿՆԵՐԸ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

## ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՅՈՒՐԻԿ ՏԱՐՍԵՎԻՉԻ



Ծնվել է 1937 թ. Սիսիան քաղաքում: 1960 թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը և նշանակվել Սիսիան քաղաքի հիվանդանոցում որպես մանկաբույժ: Նույն հիվանդանոցում կես տարի հետո անցել է վիրաբույժի գործունեությանը: Շատ կարճ ժամանակաշրջանում նշանակվել է վիրաբուժական բաժնի վարիչ, որից հետո նշանակվել է գլխավոր է բժիշկ: Հարյուրավոր բարդ ու դժվար վիրահատությունները անցել են մեծ հաջողություններով:

Բժիշկ, որը, իրոք, օժտված է բնածին շնորհքով: Ավարտել է Պետերբուրգի թիվ 1 բժշկական ինստիտուտի ասպիրանտուրան, ընդհանուր վիրաբուժության ամբիոնում: Նշանակվել է Երևանի շտապօգնության թիվ 1 հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի վարիչ:

1979 թ. առողջապահության նախարարի հրամանով տեղավորվել է թիվ 2 հիվանդանոցում վիրաբուժական բաժանմունքի վարիչ: 1997 թ. ընտրվել է ամբիոնի պրոֆեսոր:

Մեծ է Հովակիմյան մարդու հմայքը: Նա մեծ հումորի տեր է, շատ է սիրում իր ծննդավայրը և հայրենակիցներին: Շատ ընկերասեր և մարդասեր է: Պոեզիայի սիրահար է: Ղարաբաղյան ազգային–ազատագրական պայքարի ժամանակաշրջանում բուժել և վիրահատել է շատ ու շատ ազատամարտիկների: Որպես բարերար թիկունքի բժիշկ ազգովի հպարտանում ենք նրանով: Այսօր էլ բարերար է. օգնում է շատ շատերին: Մենք՝ սիսիանցիներս, հպարտությամբ ենք խոսում նրա մասին:



ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ ԱՍԼԱՆԻ
Սիսիանի հիվանդանոցի բաժնի վարիչը իր կոլեկտիվի հետ







ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ ԳԵՂԱՄԻ
գ. Բորիսովկա
Սիսիանի
շտապօգնության
հիվանդանոցի վարորդ

Վարորդը, բացի իր կյանքից,
մտածում է մյուսների մասին,
ում տեղափոխում է:



ՕՀԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԷԴԻԿԻ
Բժիշկ–դեղագործ
գ. Բռնակոթ, ք. Սիսիան

Բժիշկը կրկնակի զինվոր է,
հոգատար մարդ:



ԴԱՎԹՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՎԱԳՆԵՐԻ
Բժիշկ–հերձող
ք. Սիսիան

Ամեն մեկը չէ, որ կարող է
օտար մարմինները
սովորական
դարձնել և ամեն մեկի
դրության մեջ մտնել:



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԻԼՍՈՆ
Բժիշկ–վիրաբույժ
գ. Անգեղակոթ, ք. Սիսիան

Հպարտ եմ, որ կարողացել եմ
բժշկել շատ մարդկանց, և դա
իմ երջանկությունն է:







ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ԼԵՆԴՐՈՒՇԻ
Շտապօգնության վարորդ
գ. Վաղատնի, ք. Սիսիան

Վարորդ լինելը քիչ է, պետք է
նաև լինել ճամփորդին ընկեր:



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
ԱՐՏՈՒՇԻ
Հետախուզության պետ
ք. Սիսիան

Ես նվիրված եմ հայոց
պետականության
ամրապնդմանը:

# ԹԻԿՈՒՆՔԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ



ԵՂՅԱՆ ԶՈՐԻԿ ՀՈՎՍԵՓԻ
գ. Շաղաթ, ք. Սիսիան

Զինվորագրվեցի և մնացի մինչ այսօր զինվոր:







ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿԻ
գ. Բռնակոթ, ք. Սիսիան

Իմ ամբողջ կյանքում ծառայել եմ իմ հայրենիքի և ժողովրդի համար:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՆԻԿ ՊԱՐԳԵՎԻ
Փոխգնդապետ
գ. Վաղատնի

Առաջին հերթին մարդը պետք է լինի մարդկային՝ անկախ նրանից, թե ինչ գործունեություն է վարում:



ԶԱՀԱՆԳԻՐՅԱՆ ՆՎԵՐ ԿՈԼՅԱՅԻ
ք. Սիսիան

Հպարտությամբ ես քայլում եմ և վստահ եմ, որ լավ է լինելու:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐՈ ՍԱՐՈՒԽԱՆԻ
ք. Սիսիան

Օր ու գիշեր ստեղծել ենք հնարավոր հնարքներ:





# ԶԻՆԱԳՈՐԾՆԵՐԸ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Արցախյան ազգային–ազատագրական շարժման օրերին զինագործ կամավորները նախապատրաստական աշխատանքներ էին կատարում, օր ու գիշեր ստեղծում էին ինքնաշեն զենքեր՝ առաջին պաշտպանության օգնության համար Սիսականի սահմանամերձ տարածքները պաշտպանելու, քանի որ չկար մեր կայուն բանակը:

Զինղեկ Սեյրան Խաչատրյանի ղեկավարությամբ կազմվում էին տարբեր տեսակի աշխատանքներ: Թիկունքում կանգնած էր մի ողջ ժողովուրդ, ով ինչով կարող էր օժանդակում էր և հավատում մեր գալիք հաղթանակին:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՅՐԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ
ք. Սիսիան
Զինղեկ կազմակերպիչ

Իմ ամբողջ կյանքում ծառայել եմ, իմ ուսմունքը հաղորդել գալիք սերնդին:



ՊԱՐՈՆՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՅՈՎՅԱՆՆԵՍԻ
Ազատամարտիկ

Ինքնաշեն զենքը նեղ օրերում
փրկություն է եղել մարդկանց:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՇԱՅԵՆ
ԽԱՉԱՏՈՒՐԻ
ք. Սիսիան

Զինվոր լինելը քիչ է. նաև
պետք է լինել մասնագետ:







ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԻՐԱԿ ՎԱՉԵՆԻ
ք. Սիսիան

Պայքարը թիկունքում
հավասար է ճակատի:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԻՇԱ ԱՇՈՏԻ
ք. Սիսիան

Արել եմ, ինչ կարողացել եմ:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ (Սուլդի)
ՄԻՇԱՅԻ
ք. Սիսիան

Օրհասական պահին կատարել ենք այն, ինչ կարող էինք:



ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՐԱՉ ՄԽԻԹԱՐԻ
ք. Սիսիան

Հաղթանակը լավ ընկերության մեջ է եղել:







ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ (Բոցման)
ԵՐՎԱՆԴԻ
ք. Սիսիան

Օր ու գիշեր թե՛ օդում, թե՛ ցամաքում պայքարով հաղթանակեցինք:



ԴԱՎԹՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՅՈՒՐԻԿԻ
գ. Նորավան

Պատրաստ եմ եղել օգնելու ինչով կարողացել եմ:

# ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ



ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԵՐԺԻԿ ԱՄԻՐՋԱՆԻ
ք. Սիսիան

Իմ ամուսնու ուժն եմ եղել և մեջքին կանգնել նրա՝ Հովհաննիսյան Հենրիկի:







ԴԱՎԹՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ ՅՈՒՐԻԿԻ
գ. Նորավան

Հայրենիքը իմ տունն է, իմ ծննդավայրը:



ՄԱՐԳԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՀԱՅԿԻ
գ. Նորավան

Միշտ մտածել եմ հայրենիքի հաղթանակի համար:



ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
ՄԱՆՈՒՉԱՐԻ
գ. Վաղատնի

Մինչ պատերազմը սկսելը իմ զենքը միշտ պատրաստ է եղել, իմ պապերից լսել էի, որ մեկ օր թուրքի դեմ դուրս պետք է գանք:



ԱՎԵՏԻՍՅԱՆ ՏԱՐՈՆ ԱՎԵՏԻՍԻ
գ. Վաղատնի

Ինչքան կարողացել եմ՝ օգտակար եմ եղել իմ աշխատանքով:







ՎԱՀԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՍՄԲԱՏԻ
գ. Վաղատնի

Ինչքան էլ դժվարություն լինի, մարդը պետք է դիմադրի ապրելու համար:



ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ
գ. Վաղատնի

Թիկունքում մեր բարի, համեստ ներդրումն ենք ունեցել:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՍԱԿԻ
գ. Վաղատնի

Ամբողջ օրերը եղել ենք սահմաններում որպես հովիվ թե՛ դժվար օրերին, թե՛ խաղաղ օրերին, թե՛ պատերազմի ժամանակ:







ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԼԱԴԻԿ ԲԱԳՐԱՏԻ
գ. Վաղատնի

Պատերազմի ժամանակ որպես զոդող ձեռք եմ մեկնել բոլորին:



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ՊԱՐԳԵՎԻ
գ. Վաղատնի

Իմ մեխանիզմի միջոցով թիկունքին ուժ եմ տվել և ծառայել անշահախնդիր:



ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ
(Լրաբեր) ՍԱՆԹՐԻ
գ. Վաղատնի

Հերթապահությունը սարերում եղել է իմ աշխատանքը, նաև զուգադիպեց պատերազմը:



ՄԿՐՏՉՅԱՆ ԼՅՈՎԱ ՎԱՆՈՅԻ
ք. Սիսիան,
Վարորդ







ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՎԼԱԴԻԿԻ
(Հեղինակի որդին)
ք. Սիսիան

Մինչ բանակ մեկնելը զգացի պատերազմի շունչը, և իմ հայրիկի հետ միասին պաշտպանում էինք Միքադի սահմանները:



ՀԱԿՈԲՅԱՆ ՎԼԱԴԻԿ ՋԱՎԵՆԻ
Գրքի հեղինակը
գ. Վաղատնի

Ինչքան էլ տեխնիկան զարգացած լինի, ռազմի դաշտում ձին
շատ է պետք գալիս:







Վաղատնի գյուղի ինքնապաշտպանական խումբը
Մինքանդի դիրքեր
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ ՀՄԱՅԱԿԻ
ՀԱԿՈԲՅԱՆ ՎԼԱԴԻԿ ՋԱՎԵՆԻ
ՎԱՀԱՆՅԱՆ ՎԱՐՇԱՄ ՌՈՒԲԻԿԻ
ՇԱՓԱՂԱԹՅԱՆ ԷԴԻԿ ՍԱՄՍՈՆԻ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԳԵՆՅԱ
ՇԱՓԱՂԱԹՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՐԻԿԻ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐՈ

Հայաստան–Վրաստան

Թիկունքի կռվողները հավասար են ճակատի կռվողներին:

## ՍԻՍԻԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՆԻԿ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
ԵՂՅԱՆ ԱՐԱՄ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ԳԱԳԻԿ
ԱՅՎԱԶՅԱՆ ԱՇՈՏ
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱԲԵԼ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԼԱԶՐ
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴՈՒՐԻԿ
ԽԱՌԱՏՅԱՆ ԼԵՎՈՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԿԻՄԻԿ

---

Հիշենք նաև ազատամարտիկ Սարուխան (Սարո) Հայրապետի Մկրտչյանին, որը լուսանկար չուներ:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔԸ . . . . . 3
ՆԺԴԵՀ . . . . . 7
1988 Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ–ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ . . . . . 11
Ք. ԳՈՐԻՍ . . . . . 136
ԲԺԻՇԿՆԵՐԸ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ . . . . . 143
ԹԻԿՈՒՆՔԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ . . . . . 148
ԶԻՆԱԳՈՐԾՆԵՐԸ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ . . . . . 151
ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ . . . . . 156
ՍԻՍԻԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ . . . . . 166

ՎԼԱԴԻՄԻՐ ԶԱՎԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

**ՍԻՍԻԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ՖԻԴԱՅԻՆԵՐԸ**

*Հրատարակչության տնօրեն՝*
ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

*Գեղարվեստական խմբագիր՝*
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

*Սրբագրիչ՝*
ԼԻԱՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

*Համակարգչային ձևավորումը՝*
ՎԱՀԵ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 10,5 տպ. մամուլ:

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Հեռապատճեն՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am
էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am



## ՎԼԱԴԻՄԻՐ ԶԱՎԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Ծնվել է 1947 թ. հունիսի 6-ին Սյունիքի մարզում՝ Սիսիանի Վաղատնի գյուղում: Ավարտել է Էջմիածնի ակումբագրադարանային տեխնիկումի ռեժիսորական բաժինը: Արժանացել է 1980 թ. Մոսկվայում կայացած ժողովրդական նվաճումների ցուցահանդեսի բրոնզե շքանշանի, 1985 թ.՝ 12-րդ ուսանողական փառատոնի դիպլոմի: 1987 թ. միջազգային փառատոնի դափնեկիր է: Ելույթ է ունեցել Կրոնշտադտ քաղաքում և արժանացել խրախուսանքի: Մասնակցել է Հայաստանում կայացած բազմաթիվ տոնահանդեսների և փառատոների: Փառաբանվել է լուսանկարներով և հոդվածներով: Գովաբանվել է հայ նշանավոր գրողների կողմից: «Ժողովրդական լարախաղաց» և «Արթնացում» գրքույկների հեղինակն է: Արել է ամեն ինչ ազգային արժեքը պահպանելու համար: Մասնակցել է Արցախյան շարժմանը: Սիսիանում կազմակերպել է առաջին հանրահավաքները: Առաջինը Սիսիանում բարձրացրել է եռագույն դրոշը: «Սովետական Հայաստան» թերթում անվանակոչվել է էքստրեմիստ, դեմագոգ: Սիսիանում հիմնադրել է ԱԻՄ-ի մասնաճյուղը: Ելույթ է ունեցել բարեգործական համերգներով, հասույթը նվիրաբերել է Արցախում զոհված ազատամարտիկների ընտանիքներին: Զբաղվել է Արցախին սնունդով օգնելու հարցով: Մասնակցել է Իշխանասարի, Միքանդի սահմանների կամավոր ինքնապաշտպանությանը: 1989 թ. իր ուժերով տեղադրել է Գարեգին Նժդեհի կիսանդրին Սիսիանի «Որոտան» կինոթատրոնի դիմաց: Իր հայրենի Վաղատնի գյուղում տեղադրել է Սողոմոն Թեհլերյանի հուշաքարը: Իր ամբողջ հոգով ու սրտով մնում է հայրենիքի զինվոր:

Ունի 7 երեխա:

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
www.zangak.am